



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## **ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2018 թվականի գնումների պլանի  
մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

**ԵՐԵՎԱՆ 2018**

## Բովանդակություն

Նախաբան .....	3
1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանգազ» ՍՊԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը .....	4
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները .....	6
Հղումներ .....	6

## Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի (այսուհետև՝ Որոշում 1) 12-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշման (այսուհետև՝ Որոշում 2) №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2018 թվականի տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում:

## 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանգազ» ՍՊԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը

Ընկերությունը՝ համաձայն հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջների, ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է 2018 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:



Համաձայն հրապարակված գնումների պլանի, 2018 թվականին Ընկերությունը նախատեսում է իրականացնել 525,7 մլն դրամի գնում (ներառյալ ԱԱՀ), որի վերաբերյալ տվյալներն ըստ գնման առարկայի ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

	Գնման առարկա	Գնումների պլանային արժեքը մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում
1	2	3	4
1	Ծառայություն	48,0	9%
2	Ապրանք	477,7	91%
	<b>Ընդամենը</b>	<b>525,7</b>	<b>100%</b>

Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալների մոնիթորինգի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները
1	2	3	4	5	6	7
1	Միակ մատակարար	5	13%	186,0	36%	հունվար 2018-մարտ 2018
2	Բաց առաջարկների հարցում	9	23%	295,8	56%	հունվար 2018-հոկտեմբեր 2018
3	Առաջարկների հարցում (առանց հայտարարության)	25	64%	44,0	8%	հունվար 2018-հունիս 2018
<b>Ընդամենը</b>		<b>39</b>	<b>100%</b>	<b>525,7</b>	<b>100%</b>	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)

Նկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

## 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում կարելի է փաստել, որ գնումների պլանը կազմված է պատշաճ մակարդակով:

### Հղումներ

- Որոշում 1. Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №540Լ որոշում,
- Որոշում 2. Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №391Ա որոշում: